

կանութիւն Հայոց, եւ քաղցրութեամբ յորդորէր զնոստ յետս կալ 'ի հակառակութենէ եւ 'ի տարապարտ վիճմանց, այլ նոքա ոչ կամէին ունին մատուցանել բանից նորին, եղեալ 'ի մօր լաւութեամբ կորզել զայն տեղի: Տեսեալ Գրիգորի թէ ոչ հանդարտին նոքա 'ի խռովութենէ, մատոյց գիր աղաչանաց առ Արքայն Մուրատ՝ Գ. եւ յայտ արար զխռովայոյզ կամս գիւղականաց, եւ դատաստանական օրինօք հաստատեալ զիրաւունս իւր, եւ առաքեաց 'ի բանական Արքունի: Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ դատաւորն Երուսաղէմի՝ հաստատուն պահել զիրաւունս Հայոց, եւ զանհնազանդսն ծանուցանել 'ի Դուռն, լուեալ զայս գիւղականաց դադարեցան յաղմկէ, եւ պարտէն մնաց 'ի ձեռս Հայոց, որպէս եւ էրն. 'ի ՎՕ Բէպիլ Էվիլ ամսոյ, ՎՕՋԱ (1638):

Եհաս տօն մեծի Պասեքին, եւ ըստ նախնական սովորութեան Պատրիարքունք Հայոց եւ Յունաց յերեկոյի շաբաթուն 'ի միասին մտանէին 'ի Գերեզմանն Գրիստոսի եւ կատարէին զհանգէս Լուսաւորութեան: Այլ 'ի սմին ամի ընդդէմ կացեալ Յունաց արդելին զՀայս եւ զհետեւակս նոցա, չմտանել 'ի Գերեզմանն եւ կատարել զսովորական պաշտօնն: Գրիգոր Պատրիարք զրկեցաւ յայսմ սովորութենէ, եւ կրեաց յամօթ եւ նախատինս առաջի ուխտաւորաց իւրոց, եւ հանդիպեցաւ մեծամեծ ֆնասուց՝ թող ըզջարչարանս եւ զնեղութիւնս, եւ 'ի չգտանել յուստեքէ օգնութիւն ինչ, գիմեաց առ Արքայ՝ եւ մատոյց գիր պաղատանաց 'ի բանական արքունի եւ յայտ արար զբռնութիւնս Յունաց եւ զկորուստ իրաւանց իւրոց: Գրեցաւ հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի՝ ըստ մտաց հրովարտակին Արքային Սէլիմայ առաջնոյ, խափանել զբռնութիւնս Յունաց, յանդորուս պահել զՀայս, եւ ըստ վաղեմի սովորութեան, յերեկոյին յայնմիկ 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն եւ կատարել զհանգէս Լուսաւորութեան, եւ չիինել արդել սովորական պաշտաման Հայոց եւ հետեւողաց նոցին. 'ի ՎՕ Շէվլալ ամսոյ՝ ՎՕՋԱ (1638):

Արարացի աւազակք առանձին գտեալ զվանս Ս. Փլըրիչի արտաքոյ պարսպի քաղաքին: Կամեցան կողոպտել զնա, ծահեցին հիւսիսային զօրմն, եւ խլեալ թաւալեցին անտի